

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

թիվ 17

17 ՅՈՒՆԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրուան Նամարներ	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Դպրոցական Նամակներ	ՏՈՒԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ
Սրբի մեջ հեղին (Բանաստեղծություն)	ՀՐ. Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Տիկին Ֆուլիկ Նուպար փառա	ՕՐ. Ն. ՍԻՄՈՆԵԱՆ
Դադափարներ եւ զգայություններ	Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Վերլուծում (Բանաստեղծություն)	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Անգլիոյ Մասեմադարանները. — Խմբագրական Նոթեր

ՅՐԱՆՍԱՅԷՆ ԳԵՊԻ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՕԲԹ. ԼԷՈՐՈԼ ԲԱԲԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի թարգմանական բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հաղորդող զբոսայիտներուն համար յիսուն դրոշմ, կանխիկ վճարելի: Արտատպագրութեան 12 Գրանք կամ 5 Բուրակ: Թարգմանական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչելի պայմաններով:

Զեմ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیّه ده غلطه ده (ماسبس) غرضه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople.

UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

1880

1881

1882

1883

1884

1885

1886

1887

1888

1889

1890

Ծաղկաւոր թիւ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, տխրանք բաղմամբիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իրր Եւրոպայի եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան Եւրոպայի համ ու հոտ լունին, գերազանց են սակայն իրր կաշուարիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէլ իր ուրոյն լատկութիւններն ունի որոնք զինքը կը զոնազանեն ուրիշ տեսակներէ:



Սակայն կայ թէլ մը, որ այդ լատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահոտ եւ մանաւանդ կաշուարիչ եւ զօրացուցիչ տն զուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէլն է ձաքոնի թէլը, որ այդ լատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Նապոլեան եւ Իսպանիայի թէլի մեծ վաճառատունը, իր բաղմամբիւ յաճախորդոց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է հարսնական զուտ թէլ մասնաւոր եւ գեղեցիկ աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէլ մը համով հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատուն մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ճափոնի տեսակ տեսակ թէլեր:

Ուսադուրիւն մարգարի

7-10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնակաւորան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգոյ յաճախորդներուն թէ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Բաց ի վերադիւրս իւր մասնագիտութենէ կը բաւժէ նաեւ նորագոյն մէթոտներով ցղային եւ հագեցկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէօրաթէնի եւ ուր անուանուած աչքի երեքի եւ ուտերու ազեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ տուով եկած ցղային խռովումները եւ հրիտաւարդական մայրքները, ինչպէս նաեւ գինեմայիքը, մօրիֆնամայիքը եւայլն: Կիրակիներէն զտա ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը դադարանէ վկայեալ աղքատները: 7-10

Սիւնկիթի գեղարուեստական Կրդ Յուցանանդէսը բացուած է Բերայի ընդհ. Տնօրէնութեան սրահներուն մէջ, Պօն-Մարշէի դիմաց: Յուցանանդէսը ամէն օր բաց է և մուտքը ազատ: 3-10

Զ. Տ. Ս. ՓԱՓԻԶԷԱՆԻ երկու կարեւոր հրատարակութիւնները. — Գործնական Բառարան (հայերէն անգլիէրէն) որ կը պարունակէ 40,000է աւելի բառեր, ասութիւններ և ոճեր: — Գին լաթակազմին՝ 35 շրջ.: — Նոյն հեղինակէն Չարեփեղովեան խօսակցութիւն (հայ., գաղղ., անգլ., գերմ.) բաժնուած երեք մասերու, բառագիրութիւն, խօսակցութիւններ, նամականի: — Գին լաթակազմին՝ 12 շրջ.: — Վարժարանաց համար մասնաւոր զեղչ: 3-10

ՀԻՄՆԴՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՅՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անցորութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդոց զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտմը կատարեալ առողջութեան հասցնէ:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

25

SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ ախորժակ կուտայ և թէ մարսողութիւնը կը շտապէ. Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր դրութեան զօրութիւն կուտայ: Ընթոթի Բաղադրութիւնը թէ կերակուր և թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կարօտ եղած միւս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգելու զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջ դրութիւնը երբ միւս և զաւալ կը կորսնցնէ և հետեւապէս շուտմը այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու գիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, այժի վատնումը կը դարձնէ և առողջատես միւս կը կազմէ: Ընդ միշտ վարդադոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Բոլոր գեղաւորները և փեղաձառաները իւր ծախի:

ՆԱԶԱՐԻԹ ԽԱԶԵՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբունգրար, Պարմարան խան
Թիւ 26

Ամէն կորգի դասեր կը ստանձնէ և խնդրոյ աւարկայ եղած, քործերու համար թէ՛ բերանացի և թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ և կարծիք կը լայանէ. կը խմբագրէ և կը թարգմանէ դասերու և առեւարակած ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչև կէս օր ձգեալ. բար խորհրդակցութիւն կը կատարէ և կարծիք կը լայանէ:

Ապահովագրական գործառնութիւններու և ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող տեղեկութիւնները ձգեալ բար կուտայ:

կը լայանագրէ որ մինչև օր այս մասին կարեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չստացուին, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական փնտռուց հասուցման գույն մարներու և փոխարժէքներու գանձումներ կը ստանձնէ:

4-10

Դ Ե Ր Ջ Ա Կ

Վ Ի Չ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ս Ա Ն

Ղալաթիա, Հարանգր փողոց, Թիւ 13

Հաւ տեսակի կէպտաներով ու ձեւուտ Կապուտ պատրաստելու առաջնորդներ, որոնք միանգամայն օժանոթիւն կը փառանեն և վճարման դիւրին պայմաններ, կըրնան դիմել այս նոր բացուած խանութք, և մեծապէս գույն պիտի մնան:

4-10

ԱՄԷԻԿԱ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 17

17 ՅՈՒՆԻՍ 1906

ՕՐՈՒԱՆ ՆՁՄԱՐՆԵՐ

«ՄԱՆԿԵՐՈՒ ԹՆՆԱՄԻ» ԵՆ ԵՏՔԸ՝ «ՄԱՆԿԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ»

«Մանկերու Թննամի» էն ետքը՝ «Մանկերու բարեկամը» կուտայ մեզի Տօքթ. Յովսէփ Տէր-Ստեփանեան, մեր վաղեմի աշխատակիցը, որուն կէս-Բժշկականները չեն մոռցուած, հակառակ շատոնց ի վեր կենդանութեան նշան տուած չլլալուն: Յարգելի բժշկին երկարատեւ լուծեան պատճառը կը բացատրենք հիմայ անով որ, իր տրամադրելի ժամերը նուիրած ըլլալու էր այս փոքրիկ երկասիրութեան պատրաստութեանն ու հրատարակութեանը: Փոքրիկ՝ ծաւալով միայն, վասն զի Հ. Պիսէքերի գրքոյը, անգլիերէնէ թարգմանուած, ստուար հատոր մը կ'արժէ իր առողջապահիկ ու գերազանցապէս օգտակար նիւթովն ու բովանդակութեամբը, աղոց յատուկ ծանօթ մոլութեան վրայ խօսող, անոր ֆիզիքական ու բարոյական աղետալի հետեւանքները մատնանշող, պարզ՝ յստակ լեզուով մը, խրատներ՝ դեղեր ցոյց տուող, և այդ ախտին ճիրաններուն ենթակայ դժբաղդ փոքրիկները հողոպրելու ամէն հնարաւոր միջոց բացատրող: Հայրական չեշտ մը կայ ամբողջ գրուածքին մէջ զոր ծնողք, դաստիարակ եւ աշակերտ հաւասար ախորժով պիտի կարդան ու ամէն մէկ էջը աւարտելուն՝ պիտի խորհին լրջօրէն: Առաջինները պիտի մղուին յորդորականի մը նիւթ ընել զայն, ու վերջինները, աղաքը, չպիտի խոյս տան մտիկ ընելէ, ազդուելէ: Արմենակ Հայկունիի «Գերեզմանք երիտասարդաց» էն ու Գաբրիէլ Ներչապուհի «Առողջապահութենէն» ի վեր, որուն մէջ ալ մաս-

նաւոր գլուխ մը կար այս ախտին վրայ, և որոնց երկուքն ալ մոռցուած, սպառած գիրքեր են այսօր, Տօքթ. Տէր-Ստեփանեանի այս կրկին հատորիկները կը մնան մեզի: «Մանկերու բարեկամ» ալ՝ «Մանկերու Թննամի»ին պէս մարդասիրական գործ մըն է բացարձակապէս: Այն փութկոտ հոգածութիւնը զոր մեր դպրոցներու վարիչները ցոյց կուտան, ժամանակէ մը ի վեր, վիճակագրական ցուցակներու միջոցաւ հանրութեան ծանօթացնելու թէ քանի՜ աշակերտ ու աշակերտուհի ունեցած են, վարժարանական ելեւմուտքնին ինչ եղած է, կարգ մը անպէտ մանրամասնութեանց հետ, եթէ քիչ մըն ալ նուիրէին՝ մեզի ըսելու համար թէ իւրաքանչիւր շրջանի մէջ քանի՜ տղայ կը պակսի դպրոցէն՝ մտաւորապէս ըթացած ու մարմնապէս հիւժած, անկողին իյնալով կամ վաղահասօրէն մեռնելով, այն ատեն աւելի որոշ գաղափար մը պիտի կազմէինք, տխուր ու իրական գաղափար մը, այս տեսակ գիրքերուն ակնարկած մոլութեան գործած աւերներուն վրայ մեր մատաղ սերունդին մէջ: Դպրոցական այս կարգի վիճակագրութեանց չգոյութիւնը պատճառ մը չէ, աւա՛ղ, որ նուազ յոռետես ըլլանք. ախտը կայ ու կը մնայ և անոր դէմ հակադդելու, զայն արմատախիլ ընելու համար լուրջ փորձ մը չէ՝ եղած երբեք մեր մէջ: H. Bissekertի գրքին հայերէն թարգմանութիւնը այդ առիթը կը ներկայացնէ ահա՛ անգամ մըն ալ. թո՛ղ ամէն ծնողք ու դաստիարակ առնեն կարդան ու կարգացնեն զայն, տանը մէջ խրատականներու և դպրոցին մէջ մտերմական ոճով հրապա-

րակախօսութիւններու նիւթ ընելով զայն, եթէ տասը տղուն մէկը գոնէ ազգութի ու օգտութի, փրկարար արդիւնք մը ձեռք բերուած կըլլայ: Անմիտ նախապաշարում մը, կեղծ ամօթխածութիւն մըն է պարզապէս, խօսելէ զգուշանալ «մանչերու թշնամի» մոլութեան վրայ, իրր թէ տղոց միտքը տտով պիտի արթննար:

Կը շնորհաւորենք մեր բարեկամ ու աշխատակից Տօքթ. Տէր-Ստեփանեանը՝ իր այս առողջապահական գեղեցիկ հրատարակութեանը համար որ համակիր ընդունելութեան մը արժանի է:

ԿԵՂԵՐՈՆԱԿԱՆ ՄԷՋ

Կեղերոնական վարժարանի շրջանաւարտ կարգին հայերէնի քննութիւնները մասնաւոր հետաքրքրութեան մը առարկայ դարձած էին այս տարի, — հետաքրքրութիւն մը որմէ անմասն չէր կրնար մնալ Մաքս որ միակ հայերէն թերթը եղած է, վերջին տարիներս, մեր նախնեաց լեզուն վերկենդանացնող իր էջերուն մէջ՝ նշաւաւոր հեղինակներու քերթուածներէն գրաբար թարգմանութիւններ հրատարակելով պարբերաբար, այնքան ճիշտ որքան հարազատ, որոնք պարզ ընթերցման մը առուրկայ չդարձան, այլ ուսումնասիրութեանց նիւթ հայթայթեցին ձեռնհասներու, գրաբարագէտներու:

Երկուշաբթի, 12 յունիս, որ գրաբարի և աշխարհ. մատենագրութեան պատմութեան քննութեանց յատկացուած օրն էր, պատիւ ունեցանք ուրեմն անձամբ պատասխանելու Խնամակալութեան հրաւիրագրին և ներկայ գտնուելու այդ քննութեանց որոնցմէ մեր կրած ապաւորութիւնները կը փութանք արձանագրել ամփոփ կերպով: Կեղերոնական վարժարանը այս տարի «կընծայէ» հինգ շրջանաւարտ որոնք կարգաւ կոչուեցան՝ «Եղնիկ»ի զանազան էջերը թարգմանելու, լուծելու, մեկնաբանելու: Միակ թերութիւնը որ կը նշմարուէր այդ պատանիներուն վրայ, յստակ կերպով ու բարձրաձայն ընթերցում չկրնալ կատարելնին էր, որ զըպ-

րոցականի մը համար առաջին վարժութիւնն ըլլալու է: Եւրոպական վարժարաններու մէջ մասնաւոր կարեւորութիւն կ'ընծայուի declamationի ու տղաք կը մարդուն առայդ: Մեր բոլոր աղգ. վարժարաններուն նման, Կեղերոնականն ալ անփոյթ գտնուած էր ընթերցումի, առողջանութեան, այնպէս որ ամէն մէկ պարբերութեան՝ ունկնդիրները կը հարկադրուէին ընդմիջել — «Բա՛րձր կարդացէք որ լսենք, յստա՛կ պատասխանեցէք»: Ու շրջանաւարտը աւելի կը չիկնէր, աւելի կը չփոթէր: Եւ գուցէ այս անկարեւոր նշկատուած պարագան եղաւ պատճառ որ բացարձակապէս գոհունակ գաղափար մը չկազմեցինք իրենց կարողութեան վրայ՝ գրաբարի հմտութեան մէջ: Ասով հանդերձ, յայտնի կ'երեւար թէ իրենց գրաբարի պատուական ուսուցիչը, Յ. Գուրգէն ԼՖ., իր հիւանդագին վիճակին հակառակ, խղճամիտ կերպով կատարած էր իր դասաւանդութիւնները իր ծանօթ ձեռնհասութեամբ, և եթէ աշակերտները բաղձացուած աշողականութիւնը ցոյց չէին տար՝ պատճառն այն ըլլալու էր որ մեծ հակում մը չէին զգացած դէպի գրաբարը:

Ուշադրութիւնները աւելի սրուեցան բրնականաբար, երբ կարճատեւ դադարէ մը ետք, կարդը եկաւ աշխարհ. մատենագրութեան պատմութեան ճիւղին որուն դասախօսն է Հրանտ ԼՖ. Ասատուր: Այս անգամ, հակում չղջալու, տաք սիրտով իրենց դասերուն հետեւած չըլլալու արդարացումը գոյութիւն չէր կրնար ունենալ շրջանաւարտներուն համար որոնք, յայտնի կ'երեւար թէ, ախորժով ու հետաքրքրութեամբ հետեւած էին իրենց դասաւանդութիւններուն: Դժբաղդարաւ, այդ դասաւանդութիւնները մեծ բան մը չէին եղած. անուններու, թուականներու չոր ու ցամաք չարք մը, զորս թութակօրէն կ'արտասանէին, իրենց ուսուցչին յիշանկեալ ընդլայնումներուն օգնութեամբ, թէեւ նօթի տետրեր ալ ունէին իրենց առջեւ որոնց վրայ կը սեւեռէին ատեն ատեն իրենց ուշիմ ակնարկները: Եւ քննիչներուն ընդմիջումները, հարցումները

հոս ալ անպակաս եղան, աւելի չփոթեցնելով զիրենք:

Կեդրոնական վարժարանին մէջ աշխարհ. մատենագրութեան պատմութեան աւանդումը, որ պէտք եղածէն աւելի կը յեղյեղութիւն տարի, այս միջոցներուս, կարծեցնել տուած էր մեզի և անշուշտ շատերուն ալ, թէ իրօք «մատենագրութեան պատմութիւն» է դասախօսուածը, մինչդեռ կմախային ծանօթութեանց շարքի մը ականջալուր եղանք, որ աշակերտներուն ո՛չ իսկ որոշ գաղափար մը կազմել տուած էր այն գրական շրջաններուն վրայ որոնց թուականներն ու գրչի մարդիկը կը յիշէին միայն: Թէ Այտընեան «Քննական Քերականութիւն» մը հեղինակած է կամ Գր. Զիլինկիրեան իր Պոլիս կատարած ուղեւորութեան տպաւորութիւնները հատորի մը մէջ ամփոփած է, թէ Տօքթ. Սեւեան փաշա Վիէննայի Միթարեանց աշակերտներէն է և Մատթէոս Մամուրեան «Շահնուր» ծածկանունով ջղուտ նամակներ կը հրատարակէր իր թերթին մէջ օրուան խնդիրներու վրայ, ասոնք այն տեսակ գիտցուած բաներ են որ նախակրթարանի աշակերտներն ալ իմացած են, լրագրական ընթերցումներով, և իրրեւ աշխարհիկ մատենագրութեան ուսուցում մեծ բան մը չեն աւելցուներ աշակերտներուն մտաւորական պաշարին վրայ:

Աշակերտ մը, շրջանաւարտ մը մանաւանդ, երբ քննիչներուն կողմէ կը հրաւիրուի պատասխանելու վիճակով իրեն ելած հարցումին, աշխարհ. մատենագրութեան պատմութեան որ եւ է մէկ շրջանին վրայ, պէտք է ի վիճակի ըլլայ իր ունկնդիրներուն պարզելու այդ շրջանին գրական ուղղութիւնը ու արտագրութիւնները և զայն յատկանշող լեզուական, մատենագրական իրողութիւնները, փոյթ չէ թէ հակիրճ կերպով՝ բայց գիտակցօրէն, իր նիւթին թափանցած մէկու մը վստահութեամբ: Իրմէ սպասուածը տեսութիւն մըն է պարզապէս, և ո՛չ թէ անուններու և թուականներու շարքի մը յիշատակութիւնը որ կենսագրութեան սահմանին մէջ կ'իյնայ և երկրորդա-

կան կարեւորութիւն ունի դպրոցականներուն համար:

Մեր տպաւորութիւնները անկեղծօրէն ու անկանխակալօրէն հրապարակելով, հայերէնի քննութեանց առթիւ, չենք կարծեր վիրաւորած ըլլալ դիւրագգածութիւնը Ղալաթիոյ ինսամակալութեան որ մեր մատակարար մարմիններուն լաւագոյններէն մէկն է, և երկար տարիներէ ի վեր օրինակելի անձնութեան մը ու հոգածութեամբ կը վարէ եկեղեցիին գործերուն հետ, նաև Կեդրոնական վարժարանը, ուսուցչական ընտրելագոյն խումբի մը օժանդակութեամբ: Մասիսի իմքագրութիւնը մասնաւորապէս համակիր գտնուած է միշտ Կեդրոնականի աշակերտներուն, հրատարակելով անոնցմէ յաջողակներուն գրական արտագրութիւնները, արձակ կամ ոտանաւոր, հեղինակութիւն ու թարգմանութիւն, և ներկայ պարագային մէջ ալ՝ այս քանի մը անցողակի դիտողութիւններով՝ կը փափագի յառաջիկայ դպրոցական տարեշրջաններուն մէջ նոր զարկ մը տրուած, բարեփոխումներ ներմուծուած տեսել դասախօսութեանց այն ճիւղերուն մէջ, որոնք տկար արդիւնք տուին: Եւ վստահ ենք թէ, ինսամակալութիւնը, որուն քով ո՛չ ձեռնհասութիւն կը պակսի ո՛չ բարի տրամադրութիւն, պիտի ուզէ հաշտ ունկնդրութիւն մը ընծայել այն լրագրական հրատարակութեանց որոնք միմիայն կրթական գործին բարձրացման կը ձգտին:

ՊԱՐՏԻԶԱԿԻ բարձրագոյն վարժարանին ամսվերջի հանդէսը կատարուեցաւ շաբթուս մէջ (13 յունիս) նորակառօյց շէնքին բացման հանդէսին հետ միասին: Այս տարուան շրջանաւարտներն են՝ Պ Պ. Արշակ Աւագեան (Էնկիւրիցի), Մարտիրոս Առաքելեան (Քէօթահիացի), Միհրան Գինոցեան (Քարցի գիւղացի), Միսաք Թաթարեան (Քասթեմունիցի), Մերկերիոս Սալմասեան և Յակոբ Սալմասեան (Պարտիզակցի), Գեղամ Սերօբեան (Արսլանպէկցի), Ստեփան Տաքէսեան (Քէօթահիացի), Յակոբ Տայեան (Պարտիզակցի), Ենովք Տէր Արքահամեան (Քասթեմունիցի), Մեսրոպ Փարաւազեան (Ակոնցի):

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԵՐԱԺՅՈՒԹԻՒՆ (*)

Ա.

Սիրելի ունկնդիրներս,

Այս անգամ պիտի խօսիմ, ինչպէս նախորդ Դասիս մէջ խոստացայ, Դպրոցական երաժշտութեան վրայ: Երաժշտութիւն բառը լսելով, մի՛ կարծէք՝ սակայն՝ թէ երաժշտական արուեստին վրայ պիտի ճառեմ, կամ երաժշտութեան դասեր պիտի աւանդեմ. ո՛չ: Իմ նպատակս է, ցոյց տալ ձեզի երաժշտութեան՝ Դպրոցական կեանքի մէջ, կամ լաւ եւս, Դպրոցական Առողջապահութեան մէջ ունեցած մեծամեծ օգուտները, որոնց ծանօթութիւնը դեռ չառ ցանցառ է մեր մէջ:

Երաժշտութիւնը՝ Դպրոցական Առողջապահութեան խիստ կարեւոր և անհրաժեշտ մէկ մասն է. առանց երաժշտութեան, Դպրոցական Առողջապահութիւնը կատարեալ

(*) Ծ. Ա. — 1900 ապրիլէ մինչեւ օգոստոս, Ուսումնական Խորհուրդին նախաձեռնութեամբ Բերայի Արուեստանոցի սրահին մէջ կատարուած կիրակնօրեայ հրապարակային դասախօսութեանց մէջ կարեւոր տեղ մը գրաւեց, ինչպէս կը յիշուի, Տօքթ. Վ. Թորգոմեան էֆի. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ շարքը, որմէ մէկ քանի մասեր ժամանակին հրատարակած ենք Մասիսի մէջ: Բանասէր բժիշկը այս օրերս ի գիր առած ըլլալով նաեւ «Դպրոցական երաժշտութեան» մասը որ բոլորովին նոր նիւթ մըն է մեզի համար, նոյնքան շահեկան՝ որքան օգտակար, զայն եւս յանձնեց մեզ ի հրատարակութիւն, Խմբագրութեանս կողմէ յայտնուած փափագին վրայ: Ուրախ պիտի ըլլայինք եթէ ազգ. վարժարաններու վարիչները կարգային այս ուսումնասիրութիւնը այն լուրջ ուշադրութեամբ, որուն արժանի է, և դպրոցներուն մէջ երաժշտութեան հոգ տանէին, առողջապահիկ տեսակէտով որ լայնօրէն բացատրուած է:

բան մը չըլլար: Երաժշտութիւնն՝ այնչափ հարկաւոր է աշակերտին և աշակերտուհիին, որչափ մարմնամարզութիւնը, անոնց բարոյական, ֆիզիքական կրթութիւնն աւելի առողջ, աւելի լուրջ կերպով զարգացունելու համար:

Հին ազգերու մէջ երաժշտութիւնը, Մարմնամարզութեան չափ յարգի էր. ազգ. դաստիարակութեան էական մէկ պահանջն էր, ինչպէս կ'ուսուցանեն մեզ Աթենական և Հռովմայեցի Պատմութիւններ: Բայց ներկայ ժամանակիս մէջ աւելի մեծ կարեւորութիւն մը ստացած է այն. անցեալ դարու սկիզբէն ի վեր, շնորհիւ Սպանիացի Ամօրոզի, լայն տեղ մը ունի մանկավարժութեան մէջ. և այսօր՝ չիկայ վարժարան մը եւրոպական կամ Ամերիկեան որ իր աշակերտներուն ու աշակերտուհիներուն երաժշտութիւն չի սովորեցունէ:

Մեր դպրոցներուն մէջ՝ շատ մը կարեւոր առարկաներու պէս երաժշտութիւնն ալ դժբաղդաբար բարձի թողի եղած է: Ազգ. վարժարաններուն մէջ երաժշտութիւն գրեթէ չիկայ և կրնամ ըսել թէ անկարեւոր իսկ համարուած է այն, թէեւ կրթական Դրադիրն իս բաւական մեծ տեղ մը տուած է անոր: Մեր մանչերը, մեր աղջիկները, դպրոցին մէջ զրկուած են երաժշտութենէ, բնութեան այդ քաղցր լեզուէն, բա՛ւ աստեղծութեան սիրած այդ հեշտ բարբառէն. մեր մանուկներն ու մանկուհիները երգել չեն գիտեր, մինչ իրենց շուրջ ամէն ինչ երգ կ'երգէ. անտառները, ծառերն ու ծաղիկներ, հաւերն ու թռչուններ, ծովերն ու դեռեր իրենց երգն ու իրենց երաժշտութիւնն ունին. ինչո՞ւ մեր տղաքն ալ իրենց երգը, իրենց դայլայլը, իրենց երաժշտութիւնը չունենան:

Երաժշտութիւնը խիստ հարկաւոր է մեր վարժարաններուն մէջ, ո՛չ միայն իր բարոյական և հոգեբանական հրաշալի օգտակարութիւններուն համար, որոնք յայտնի են ձեզ արդէն, այլ որովհետեւ ունի այն լատկարեւոր ազդեցութիւններ աշակերտներու գործարանային բոլոր դրութիւններուն վրայ:

աղբեցութիւններ՝ որոնց արդիւնքն է կենսաբանական, ուստի և կենսապահական օգուտներ, զորս պիտի ջանամ հնար եղածին չափ պարզ լեզուով բացատրել ձեզ:

* * *

Մարմնամարդութեան վրայ խօսած պահուս, կը յիշեք անշուշտ որ կենսաբանական կարգ մը բացատրութիւններէս վերջը, հիմնուելով մանկավարժական ընդունուած օրէնքներու և բժշկական վարդապետութիւններու վրայ, ես ալ կը հետեւէի Տօքթ. Լակրանտի պատուէրին, և մեր վարժարաններուն համար՝ իրեւ մարմնամարդութեան միջոց՝ կը յանձնարարէի գլխաւորաբար տեսակ տեսակ խաղեր, մանաւանդ այնպիսի խաղեր որոնք պոռալով կանչելով կամ երգելով պէտք էին կատարուիլ:

Այս կերպ խաղեր յանձնարարելու բուն նպատակն էր՝ կուրծքի մարզանքի ճախապատուութիւն տալ և ընդունիլ մարմնամարդական այն միջոցները որոնք թէ՛ դիւրին են և թէ՛ ուղղակի շունչի դաշտին ընդլայնիչ կ'ըլլան: Տղու մը փիղիքական կրթութեան մէջ ամէնէն աւելի հսկողութեան առարկայ ըլլալիք բանն է՝ կուրծքը, ձայնի և շունչի գործարանները. այո՛, մեծ կարեւորութեամբ ուշադրութիւն միշտ ընելու է, որպէս զի լաւ զարգացում ստանան ձայնային ու շնչային դրութիւնները որոնք պատանեկան հասակի առողջութեան աւագ դռներն են:

Բաւական չէ՛ որ աղջիկ մը կամ մանչ մը, հաստ բաղուկներ, գէթ սրունքներ և լեցուն զիստեր ունենայ. եթէ չունի հաստատուն կուրծք, զօրաւոր թոքեր, առողջ շնչափող և առողջ ցնցուղներ, չի կրնար քաջակազմ նկատուիլ:

Երաժշտութիւնն հիանալի և ամենազգեցիկ միջոց մըն է՝ աշակերտներու թոքերն ընդլայնելու, շնչական խողովակները մաքուր պահելու, ի մի բան՝ կուրծքն առողջ ընելու, որով անոնց մարմինը գործարանային բոլոր դրութիւններով կ'ըլլայ առողջ ու կը շարժանայ առողջ:

Գիտցէք սակայն թէ խնդիրը Չայնական երաժշտութեան վրայ է, որ թէեւ բարոյական տեսակէտով բնաւ չի տարբերի գործիականէն, այլ առողջապահական աղբեցութիւններով՝ առաւելութիւններ ունի անկէ:

* * *

Չայնական երաժշտութիւնը ո՛չ այլինչ է, բայց եթէ թոքերէ դուրս փչուած օդին աղբեցութեամբն յառաջ եկած թրթռումը ձայնային լարերու, և այդ թրթռումի այլ և այլ կերպ ելեւէջներն ու աստիճանաւոր ոլորումներն ուղղակի կ'ազդեն թոքերու, կամ ճիշդն ըսելով, կը խաղան թոքային բջիջներու հետ. ուստի պատճառ կ'ըլլան անոնց ընդլայնումին, աճումին, և այսու կը զարգացունեն տակաւ կուրծքը, պարունակած բոլոր գործարաններն ալ հետ:

Այս ըսածներու լաւագէտ հասր ըլլալու համար, հարկ է նախ գոնէ հարեւանցի մը դիտել շնչողական մեքենային կազմութիւնն ու բնաբանութիւնը, ինչպէս նաեւ ձայնի գործարանը որ յարակից է անոր:

Շնչողական մեքենան որ կը կոչուի նաեւ շնչողական ծառ, կը բաղկանայ կարգ մը գործարաններէ որոնց համեմալիս պաշտօնն է կենսապահ յատկութիւններ ընծայել արիւնին: Ամենաօրէն կերպով կապուած արիւն շրջագայութեան մեքենային, որ արիւնի ամբողջ գումարութիւնն որոշ ժամանակի մը համար իր աղբեցութեանը կ'ենթարկէ, շնչողական մեքենան իրեն կը քաջէ արտաքին օդը, զայն առատօրէն հաղորդակցութեան մէջ դնելու համար արիւնին հետ:

Եւ այսպէս, երկու կենսական հոսանքները, արիւնն ու օդը, դէմ առ դէմ կուգան և կը հակազդեն իրարու. արիւնը միջոցաւորապէս օդին կը թողու իր ամխային թթու ու ջրաշոգիւն, և օդն ալ փոխարէն կուտայ անոր իր թթուածինը որ՝ ինչպէս գիտէք՝ ամէն տեսակ բջիջի կեանք տուող նիւթն է: Այս փոխանակութեան միջոցին ահա՛, արիւնարարութիւնը տեղի կ'ունենայ, այսինքն արիւնը կը շինուի, սեւութենէ կ'ելլայ, կ'ըլլայ կարմիր. երակայնութեանէն

կը փոխուի շնչերակայնութեան, և որ նախապէս անյարմար էր անդառութեան, ալ կարող կըլլայ ու ատակ՝ չորս դին ջերմութիւն եւ կեանք սփռելու:

Շնչողական մեքենան այս հոսանքներն իրար միացնելու համար կը լայնանայ նախ, որպէս զի զանոնք իր մէջն ընդունի, և երկուքին իրարու վրայ ունեցած հակազդեցութիւնն աւարտելէն յետոյ, դարձեալ կը փոքրանայ, կը կծկի, օդէն փոխ առածն իրեն հատուցանելու և թոյլ տալու՝ որ ազատօրէն կարմիր արիւնի անօթներուն մէջ վազէ, ինչ որ նախապէս ստացած էր սեւ արիւնի անօթներէն:

Այն շարժումը որով շնչողական մեքենան կը լայնանայ արտաքին օդն ետին ձգելու, կը կոչուի «շնչառութիւն» (inspiration), իսկ այն շարժումը որով կը պզտիկնայ իրմէն օդը դուրս վտարելու համար, կը կոչուի «շնչատրութիւն» (expiration): Այս երկու իրողութիւնն իրարու հետ կը կազմեն շնչողական շարժում մը որուն թիւը մէկ վայրկեանի մէջ 14-16 հատ է սովորաբար: Շնչողական շարժումներու յաջորդութիւնը՝ շնչումն կամ շնչողութիւն (respiration) կ'անուանուի:

Շնչողական մեքենան իր կազմութեանը մէջ ունի երեք խումբ իրարմէ տարբեր գործարաններ որոնց ամէն մէկն առանձին պաշտօններ կը կատարեն:

Առաջին խումբին պաշտօնը մեքենական է, երկրորդինը՝ նիւթական, իսկ երրորդինը՝ բոլորովին քիմիական: — Առաջին խումբին գործարաններն են՝ լանջային ալ ու ձախ խոռոչներն որոնք թոքերուն հետ մէկտեղ լայնալու ու նեղնալու յատկութիւնն ունին, արտաքին օդը ներս քաշելու ու դուրս տալու համար: Այս խոռոչներուն յատակը գոցուած է ստոծան կոչուած լայնարձակ դնդերով, շուրջ բոլորն ու վրան ալ շատ մ'ուրիշ դնդերներով որոնցմէ ոմանք շնչառիչ (inspirateur) կոչուած են շնչառութեան ժամանակ գործելուն համար. ոմանք ալ՝ շնչատրիչ (expirateur), շնչատրութեան ժամանակ գործելուն համար: — Երկրորդ խումբի գործարանները կը ձեւացունեն մեծ խողովակ մը կարծր ու պինդ, որուն պաշ-

տօնն է՝ շնչառութեան ժամանակ օդը տանի մինչեւ արիւնարարութեան վայրը, և յետոյ՝ շնչատրութեան ատեն ալ զայն դարձեալ դուրս հանել: Այս խողովակը կը կազմեն վերէն վար՝ ունչը, յետունչը, կողկողիթը, կոկորդը, խոշակը որ է միանգամայն ձայնի գործարանը, և շնչափողն ու ցնցուղները:

Երրորդ խումբի գործարաններն են՝ թոքերը որոնք լանջային երկու խոռոչներուն մէջ ամփոփուած, դուրսի հետ կը հաղորդակցին վերոյիշեալ օդանցոյց խողովակով և կազմուած են սոյն խողովակին և արեան անօթներու ճիւղաւոր բաժանումներու ծայր վճրջաւորութիւններէն. վերջաւորութիւններ ներայնափ նրբին, այնչափ մանրադիտական, որոնց մէջ արիւնն ու օդը փոխիացում մը գրեթէ կը կրեն՝ իրարմ հետ լաւապէս խառնուելու համար:

Այս երեք խումբ գործարաններէն զանց առնելով առաջինները որոնք կրնան զմեզ շատ հեռացունել մեր բուն նիւթէն, կարեւոր կը համարիմ ներկայացունել ձեզ՝ երկրորդ, բայց մանաւանդ երրորդ խումբինները, թոքերը, որոնք Ձայնական երաժշտութեան անմիջապէս և գլխաւոր ենթականերն են:

ՏՕՔՔ. Վ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԳԵՏԻ ՄԸ ՅԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ

Հաճոյքով կ'իմանանք թէ ծանօթ դանակահար Ստեփան Բաբելեանի հեղինակած Vers le Passé երաժշտական կտորը ընդունելութեան արժանացած է Բըթի-Շանի երաժշտական խումբէն և մուտ գտած անոր répertoireին մէջ: Հաճելի պարագայ մըն է տեսնել թէ հայ երաժշտագէտի մը տաղանդին արդիւնքն ալ այսպէս կը դասուի եւրոպացի մեծ երաժշտագէտներու կարգին մէջ: Մասնաւորապէս հայ ունկնդիրներու համար հաճոյալի տպաւորութիւն մը կ'առթէ երաժշտական ծանօթ կտորներու հետ նուազումը երիտասարդ հայ արուեստագէտի մը գործին, Բըթի-Շանի սիրուն պարտէզին մէջ: Այս յաջողութիւնը առիթ մը կը դառնայ շնորհաւորելու Տիար Բաբելեանը իր գտած ընդունելութեանը համար:

Վ Ե Ր Յ Ի Շ Ո Ւ Մ

(Հ Ո Վ Ո Ւ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն)

Թուխ իրիկունն իր յորդ հըմայքներուն
Պաշտամունքին մէջ մեր հոգին կ'օրրէր :
Հիր ժանեակներով եղերուած , հեռուն
Ամպեղէն գորշ , ձոյլ՝ նըրբին քանդակներ
Հօրիզոնէն վար , հոյակապ , անհուն
Պատկեր մը կախած էին աներեր :

Ձեռք ձեռքի ու մերթ թեւ թեւի , թեթեւ ,
Նըրբուղիներէն մենք կ'ընթանայինք :
Ես ու ան էինք . — ան՝ բո'ց , հո'ւր , արեւ : —
Կը մընջէր թէ ի'նչպէս ատենօք ինք
Իր սըրտին խորհուրդ-ալքերուն ետեւ
Պահած էր սիրոյ գաղտնիք մ'ո՛վ երկինք... :

Ու կը ճաճանչէր թովքն իր աչքերուն՝
Իր ձայնին ոսկին երբ կը հընչէր ջինջ
Իիւթերգի պէս մէջն հոգւոյս մոլորուն :
«Սիրած էի զաշն , օ՛հ , չեմ գիտեր ի'նչ
Հըրապոյր մ'ունէր այդ տըղան որուն
Կապուած մընացի» — կ'ըսէր ձայնն... անխիղճ :

Ու կ'աւելցընէր . «Ա'յնչափ լացի որ...
Երբոր հեռացաւ , գընա'ց ալ անդարձ... :»
Բայց այդ չեղտերուն մէջը լիրաւոր՝
Չիս խօցելու ո'չ իսկ նըշոյլն առկայծ... :
... Իբըր պատասխան՝ չըրթներս իր աղուոր
Ձեռքին հըպեցան , մընացին յանկարծ... :

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ԵՒ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Հետզհետէ չա՛տ աւելի աղէկ կ'ըմբռնեմ թէ լրագիրը ընթերցողին վրայ չափէն աւելի կ'ազդէ և թէ ո՛ր և է անհատի մը մտաւորական կարողութիւնը կրնաս հասկնալ իր կարողացած գիրքերէն կամ լրագիրներէն :

Ինչպէս եղաւ, չեմ գիտեր, անգամ մը մեր զաւեչտաթերթին մէջ յօդուածներէս մէկը տպուած տեսայ . ո՛վ գիտէ ճակատագրական ի՛նչ դիպուածով մը գացեր ինկեր էր անանկ միջավայրի մը մէջ, ուր ընթերցողը մի՛միայն զաւեչտին վրայ գաղափար ունի, և որ ա՛յնքան բան կը հասկնայ եղեր լուրջ գրուածքէ մը որքան ես, օրինակի համար, ճարտներէնէն կը հասկնամ :

Յօդուածս հազիւ հրատարակուած, և անա՛յ այդ զաւեչտաթերթին ընթերցողներէն իմ ծանօթներս սկսան զիս շնորհաւորել .

— Ան ի՛նչ աղուոր երգիծաբանական յօդուած էր :

Ուրիշ մը .

— Ի՛նչ զաւեչտական սիրուն գրութիւն էր... «Բանանային վերարկուն» :

Փոթորիկի մը ատեն ա՛յնքան չպիտի ապշէի, եթէ վերէն գլխուս վրայ կղմինտրի կտոր մը իյնար յանկարծ : Երեւակայեցէ՛ք... «Բանանային վերարկուն»՝ զաւեչտական... :

Եւ զարմանալին հոն է որ այդ ընթերցողներուն երբե՛ք չկրցայ հասկցնել թէ յօդուածս երգիծական ըլլալէ հեռու, տխուր զգայութեան մը տակ արտադրուած գաղափարի մը ընդլայնումն էր :

Մարդիկը, որովհետեւ զաւեչտաթերթին վարժուած են միայն, կը կարծեն թէ բոլոր իրենց կարողացածները... զաւեչտական են :

Իրաւունք չունի՛մ արդէն աւելի՛ն պահանջելու իրենցմէ :

* * *

Աշխարհիս վրայ երկու բան զիս չա՛տ յոգնեցուցած է :

Երազելը և խորհիլը :

Առաջինը՝ երկրային զգլխով երկրպագութեան մը, և երկրորդը՝ երկնային աստուած

ծաւառ ծնրադիրութեան վրայ տարակուսած պարագայիս :

* * *

Երէկ Տանիէլ Լըզիւէօրի Le meurtre d'une âme-ը աւարտեցի :

Բռնի ամուսնութիւններու հետեւանքը եղող դժբաղդութիւններուն պատմութիւնն է ասիկա :

Իր ամբողջութեանը մէջ հոգիի, անձկութեան, խանդաղատանքի հրաշալի քերթուած մըն է, և իր մանրամասնութեանը մէջ՝ տկար վէպ մը :

Ծայրէ ի ծայր կարդալէդ վերջը կը հարցնես ինքզինքիդ թէ ինչո՞ւ այդքան մարդիկ կը ծնին ու կը մեռնին հոն, մէկէն ի մէկ, առանց որոշ անհատականութեան մը ցոլացումին, առանց ապրելու ո՛ր և է իրաւունք մը ունենալու, մինչդեռ անդին ա՛մէնէն կարեւոր և գիրքին ոգին կազմող անձերուն կեանքը անյայտ կը մնայ ու կը քօղածածկուի մոռացութեան շողիներուն ետեւ :

Չես կրնար ըմբռնել որ ի՛նչպէս կին մը իր զաւակը կը յանձնէ անանկ ամուսինի մը զոր չսիրելու մէկէ աւելի պատճառներ ունի, ամուսին մը որուն արդէն չպատկանիր այդ միեւնոյն զաւկին հայրութիւնը, — կին մը որ դժգոհ է իր ամուսինէն, այդ պաշտելի Արմանտը օրինակի համար, ինչո՞ւ չկրնայ ամուսինէն բաժնուիլ : Տեղ մը՝ հեղինակը վէպին դիւցազնին ստնտուն կաթուածահար ընելէ վերջը կ'ապրեցնէ զանիկա գիշեր մը, որպէս զի յաջորդ օրը գայ իր մեծցուցած տղան, անոր մէկ քանի գաղտնիքներ տալու համար :

Վէպ մը երբե՛ք գաղափարի և իրադարձութեան անբնականութիւն պէտք չէ ունենայ : Հակառակ պարագային, աշխարհիս ամէնէն հմայիչ լեզուով գրուած գեղեցիկ պատկերացումներով ճիս գիրքը՝ վէպ ըլլալէ կը դադրի, զգացումի քերթուած մը ըլլալու համար միայն :

* * *

Մութին մէջէն տրտմութեան մը հեւքը կուգայ ականջիս :

Բնութիւնը, իր գիշերային հանդարտ ե-
րազանքին մէջ, կը թուի սառած ըլլալ.
ծաղիկներու թմրեցնող բուրմունք մը կը
բերեն դէպի ինծի, երկար ու մթաստուեր
թեւերը գիշերուան, որ անհունապէս լայն-
ցած, անհունապէս տարածուած, կը ճնշէ
հոգիիս վրայ:

Ես այդ մութը կը սիրեմ սակայն:

Բարոյական յոգնութիւններու, բանաս-
տեղծի յանկարծական վերացումներու և
մտամտիփ սլացքներու բոլոր մեղամաղձու-
թիւնը կը տանիս միացնել բնութեան մու-
թին:

Հոն այնքան դիւրութեամբ կը հասկնան
դիրար առարկաները:

Իմին սիրական էլ վիրս, աչքերդ փակէ,
որպէս զի «մութը չ'արիւնեա նայուածքիդ
հրաշոգ ու փայլակնացայտ հրդեհումովը»:
Ներանձնացի'ր ինծի պէս ու ձեռքերդ եր-

կարէ' գրկելու համար գլուխը բանաստեղ-
ծին, որ յոգնած է երազելէն:

Մութին մէջէն արտմութեան մը հեւքը
կուգայ ականջիս:

Սիրտիդ բաբախումը, թո'ղ օրօրս ըլլայ,
մազերուդ լայներախ սահանքովը ծածկէ
դէմքս, որ տոգունած է երեւակայական
հետապնդումներէն:

Ու, եթէ կ'ուզես, գիշերուան այս
թմրեցնող պահուն, հեռանալով խոկումի ու
անըջանքի բեւեռներէն, անձնատուր ըլլանք
քունի սթափեցնող բազուկներուն: Եւ քնա-
նանք, քնանանք մինչեւ այն վայրկեանը՝
որ մեր երջանկութիւնը պիտի աւետէ:

Օհ, սպասումի այս ցնցող, գալարող,
երկար, անվերջալի ցերեկը կը յուսահատե-
ցնէ զիս:

Արդեօք մարդ կոնա՞յ միայն իր երջան-
կութեան առտուն արթննալ...:

Մ. Ա. ՊԱՐԱՍԵԱՆ.

ՄԵՏԻ ՄԱՋ ԼՊՊԵԼ

Գիշերուան կոյր աչքը մէկէ'ն կը վառի
Ու կ'աղօսէ լուռ անուրջը մթութեան.
Հրդեհին չէկ նայուածքն է ան կատաղի
Որ կը չափէ մութն ամայի, անսահման:

Քակուին խեղդուկ, խո՛ւլ խո՛ւլ ճիւղեր գալարուն
Անըջալից թմրած կուրծքէն Գիշերին.
Անով լեցուն աչերն յառին բոցերուն
Օհ, բոցերուն որք կըսպառին, չսպառին...:

Այն-պէս ալ քու կուրծքիդ ներքեւ տխրագին,
կայծեր յանկարծ բոցավառին, հէ՛գ քերթող,
Հրդեհէն վերջ խանձի Մաղիկը կեանքին
Ա'լ խորակոյտ մըն՝ ես անշունչ, անփ մը հող...:

ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՏԿԻՒՆ ՖՈՒԼԻԿ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Անհետացող սիրուած ու ծանօթ դէմքի մը ետեւէն ցաւի ու յարգանքի հրապարակային հարկ մը մատուցանելու համար ժամանակին անցնիլը մեծ նշանակութիւն մը չունի. և թէեւ երկու ամիսներ գրեթէ սահեցան յորմէ հետէ կորսնցուցինք այս աղնուատում Տիկինը, բայց այսօր միայն կրնամ ձեռք առնել գրիչս՝ խոսուր երազէ մը արթնցածի պէս, քանի մը տող նուիրելու իր յիշատակին: Անկարելի է ինձ՝ այս աղուոր կեանքին արժանիքին համեմատ լրացնել փափագս. պիտի ջանամ ուրուագծել կեանք մը որ այնչափ օգտակար եղած է: Շատ մեծ դէմք մըն էր որ անյայտացաւ Տիկին Յուլիկ Նուպար փաշայի մահուամբը, չուրջը թողլով ահագին պարագ մը զոր ո՛չ մէկ բան կրնայ ընուլ, այնչափ ինքնուրոյն էր ինք ամէն կերպով: Մեր ամէնէն նշանաւոր գերդաստաններէն Քարաքէհեաներու, Տաքէսներու, Փափագեաններու աղնուագոյն շառաւիղը, իր տոհմային պատուական յատկութիւններուն միացուցած էր եւրոպական բարձր դաստիարակութեան մը առաւելութիւնները. արեւելեան ու եւրոպական մէկ քանի լեզուներու տեղեակ, երաժիշտ ու նկարիչ: Բնութիւնն իսկ օժտած էր զինքն ամէն ձիրքերով: Գեղեցիկ հասակ, համակրելի դէմք, հիանալի թուլ աչքեր՝ սրտագրաւ իրենց հրապուրիչ արտայայտութեամբ, զօրաւոր խելք, նուրբ միտք, համով հոտով խօսակցութիւն՝ նոյնքան շահագրգռող որքան գրաւիչ: Մեծ հեղինակներու ընթերցումով սնած եւ զանոնք լաւ ուսումնասիրած, հետաքրքրի միշտ նորը սորվելու, Տիկին Նուպար փաշա խորունկ կերպով կը շօշափէր ամէն նիւթ, պատմութիւնն ու արուեստը, իրեն ու մարդերը: Ընտանեկան վիշտեր խոցոտած էին իր սիրտը, առանց զայն դառնացնելու. ընդհակառակն աւելի բարձրէն կը տեսնէր աշխարհն ու փրկստփայի մը լայն ներողամիտ ոգին ունէր. խելքովը կը դատէր, այլ սիրտովը կը

գործէր, հրեշտակային սիրտովը որ ժառանգութիւնն էր անշուշտ իր մօրը՝ Էպրու հանրմին: Առաջին անգամ որ տեսայ Յուլիկ հանրմը, — «Հանրմը»՝ ինչպէս կը կոչէին զինքը, — շատ հեռուէն սիրալիւր յիշատակ մը ունէի Էպրու հանրմէն, իբր մօրս ամէնէն աւելի սիրած անձէն. բայց կարծեցի թէ արդէն իսկ ծանօթ էր ինծի այս ձկուն հասակը, աղնուական կաց ու շարժումը, իմացականութեամբ գրաւիչ այս դէմքը, ու բարութեամբ լի պաշտելի աչքերը: Յաջորդ այցելութեանս ճաշի վար դրաւ զիս, եւ բախտն ունեցայ ճանչնալու Նուպար փաշան, իր մեծ մարդու շնորհալի ընդունելութեամբը որ անմոռանալի յիշատակներէս մին պիտի մնայ: Սեղանի վրայ, զինքը միայն դիտելու եւ մտիկ ընելու զբաղած էի. կարծէք կը զգայի թէ երկար չպիտի ունենամ այս վայելքը: Վերջէն, երբ մօտէն ճանչցայ Հանրմը եւ երբ կը խօսէր Նուպար փաշայի մասին, լաւ ըմբռնեցի թէ ի՞նչ կորուստ ըրած էր այսպիսի պատուական ամուսնոյ մը մահուամբը որուն սրտանուէր ընկերակիցն եղած էր, անձնուէր օժանդակը, եւ մանաւանդ ներքին կեանքը քաղցրացնող բարեկամուհին, եւ որուն հետ ապրած էր ամբողջ կեանքի մեղրալուսին մը:

Ճոխութեան մէջ ծնած, պերճ կեանքով ապրած, աղքատի մը չափ կը զգար սակայն կարօտին վիճակը. խնայասէր իր անձին համար, շաշլ էր բարիք գործելու մէջ, Գանի՝ քանի ընտանիքներ որոնց նախախնամութիւնն էր եղած, քանի՝ քանի երիտասարդներ որոնց գործ հայրայթած, կարեւոր դիրքերու տէր ըրած էր, քանի՝ քանի ուսանողներ որոնց ձեռք կարկառած ու ապագան ապահոված էր, կը սիրէր ու կը յորդէր զանոնք իբր իրենները: Ուրիշի օգնելու եւ է եղանակի մէջ որ կը պատահէր ամէն օր, այնպիսի փափկութիւններ կը դնէր որ պաշտելի ըրած էին զինքը: Բարեկամութիւնը թանկագին էր, չէր չափելի դաշն. բայց երբ բարեկամ էր՝ «սիրածներուս պատկառութիւնները կը ջանամ մոռնալ, կ'ըսէր իրենց լաւ կողմերը միայն տեսնելու համար»:

Եւ անգին բարեկամ մըն էր իր անձնութեամբը, իմաստուն խորհուրդներովն ու ամէն փափկանկատութեամբ։ Ամբողջ կեանքը մեծցած ու ապրած է նշանաւոր անձնաւորութեանց ընկերութեան մէջ։ Կիանալի էր իր պարզութեամբ, - ցեղական պարզութիւն մը որով հազարաւորներու մէջէն կարելի էր զինքը զանազանել առանց ճանչնալու։ Ամէնուն սիրելին ու ամէնուն յարգելին՝ իր փափագն հրաման մըն էր իրեններուն համար, ու կամքը պատգամ մը, վասն զի փափկութեամբ կը յայտնէր զանոնք և ուղղամտութիւնն իր բնաւորութեան հիմը կը կազմէր։ Գերազանցապէս բարի՝ իր ուրախութիւնը կը գտնէր ուրիշին հաճոյք պատճառելուն մէջ։ Կարելի էր զինքը տեսնել ու չհամակրիլ, մօտէն ճանչնալ ու չսիրել։ ամէնուն հետ անոյ խօսք մը, սիրուն կատակ մը ունէր։ Եւ հազուադէպ անձեւէն էր, որոնց մտերմութիւնը նորանոր յատկութիւններ քի յայտ կը բերէ որ օր ըստ օրէ աւելի սիրելի կ'ընծայեն զիրենք, որոնք իրենց բոլոր գոգցես իրենց շուրջը կը սփռեն, կ'ազնուացնեն զիմացիները, դէպ ի իրենց կը բարձրացնեն։ Ինչ դասեր կան առնելիք այս գեղեցիկ կեանքէն։ Կարգ, կանոն, այս էր իր կեանքին սկզբունքը որ մեծապէս ազդած էր ու գրեթէ սկզբնապատճառն եղած էր տան մեծութեանը։ Կատարեալ տանտիկնոջ տիպար՝ Տիկին Նուպար փաշա «էսնաֆ» կնոջ մը պէս ամէն առաւօտ կ'արթննար ժամ 7ին, ու իր հրահանգները տալէն վերջը, ընթերցանութեամբ, ասեղնադործութեամբ կամ նկարչութեամբ կ'անցընէր առաւօտը։ Երիտասարդ կնոջ մը պէս աշխոյժ, աշխատասէր և գործունեայ, մէկ վարկեանը պարաս չէր անցընէր, ծայր աստիճան ունէր գեղեցիկին ճաշակը, սիրահար գեղարուեստից։ Հարաւի հրաշալի կլիմային տակ ուր կ'անցընէր շատ ձմեռներ, Նիսի և Քանի արտադրութիւն՝ երփներանգ վարդերու, շահօքրամներու և միմօղաներու զմայելի փունջեր, հիանալի ճաշակով յարդարուած, իր վրձինին ներքեւ կարծէք կը բողբոջէին, կ'ապրէին, բուրաստանի երեւոյթ

մը տալով աղբիւրին՝ իր ամէնէն սիրական վայրին։ ամբողջ պատերը զարդարուած էին իր նկարներով որոնցմէ երբեմն կը նուիրէր մտերիմներու։ Այնտեղ կը զմայլէինք եգիպտական Scarabներու, հին զարդարանքներու, յունական նախնի դրամներու հազուադէպ հաւաքածոյի մը վրայ զոր գրեթէ ինք անձամբ կարգադրած էր, Յունաստանի և Փարաւոններու պատմութիւնը լաւ ուսումնասիրողի մը հմտութեամբ։ Իր վերջին սուգէն ի վեր, գրեթէ քաշուած կ'ապրէր Բարիզ, Պուլաիէն փողոցի իր տանը մէջ, Անտառին մօտերը, հին ծառաներով՝ իր մօտ ծերացած։ Մարդասէր և հիւրամեծար, ազնուական տիկնոջ տիպար մըն էր, միշտ չըջապատուած մտերիմ բարեկամներով։ Կեանքին մեծ մասն Եւրոպա ապրած, Տիկին Նուպար փաշա յոյժ նախանձախնդիր էր սակայն մայրենի լեզուին, տոհմային բարքերուն, բնիկ անուններուն։ Երբ իր հիւրասրահն օտարական չգտնուէր, հայերէն միայն կը խօսուէր, և իր թոռները պարտաւոր էին Հայ լեզուով միայն գրել իրեն։ Ինքն ալ մասնաւոր տաղանդ մը ունէր սիրուն նամակներ գրելու, որոնք իր նուրբ զգացումներուն և անոյ սրտին ճշմարիտ արտայայտութիւնն էին։

Մեծ գրիչներու անկ էր նկարագրել այս մեծ տիկնոջ կեանքը։ Ես բախտը միայն ունեցած ըլլալով զինքը մօտէն ճանչնալու և շատ սիրելու, այս քանի մը տողերով հիացումս ու վիշտս միայն կը յայտնեմ։ Իր թանկագին յիշատակ, Տիկին Նուպար փաշա թողած է երկու զաւակներ, Պօղոս փաշա ու այրի Տիկին Լէոն պէյ Գաբամաճեան, ու սիրասուն թոռները, որոնք պիտի շարունակեն այդ բարեհամբաւ գերդաստանին առաքելութիւնները։

ԲԱՐԻԶ

ՆՈՒՐԵԿ ՍԻՄՈՆԵԱՆ

(Բիւզանդիոն)

ՖՐԱՆՍԱՅԵՆ ԴԵՊԻ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՈՒՔԹ. ԼԵՌՈՒՆ ՔԱՐԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

Կամրջակին երկայնութեամբ պտտեցանք միասին: Բժշկական նիւթերու վրայ խօսք բացաւ. յետոյ, դեղարանիս դրան առջեւ. ըսաւ յանկարծ.

— Ներս մտնենք:

Դուռը բացի, վայրկեան մը վարանելէ ետք բանալին դարձնել այդ խցիկին որուն միակ տէրն էի: Հոն, սկսաւ ուշադրութեամբ զննել ամէն բան և ես ներքնապէս կը խնդայի՝ գիտնալով թէ ի՞նչ կը փնտռէ. բոլոր վտանգաւոր դեղերը ձուկերուն կեր տուած էի օրեր առաջ: Ու չէի սխալեր իմ բնազդմանս մէջ որ կըսէր ինծի թէ այդ մարդը փորձանքէ մը կը վախճար զոր իր գլխուն պիտի բերէին ընտանիքը կամ ուրիշներ:

Ամէն բան աչքէ անցունելէն ետքը, իր յուսացածը չի գտնելով, խօսակցութեան նիւթը փոխեց յանկարծ:

— Ահ, ըսաւ, անկարեւոր պարագայ մը դիպուածաւ յիշողի երեւոյթով, պիտի խնդրեմ ձեզմէ, Տօքթէօս Բարլան, որ շատ ուշադրութիւն ընէք Պահիաի մէջ:

— Ի՞նչ կայ որ, հարցուցի, վտանգաւոր քաղաք մըն է արդեօք:

— Ո՛չ ձեզի համար, այլ ինծի համար միայն: Անտանելի ընտանիք մը ունիմ: Կրնայ ըլլալ որ այստեղ հեռագրած ըլլան իմ մասիս լուր առնելու համար, և նեղացուցիչ հարկի մը մէջ գտնուիմ.

— Շատ կը մեղքնամ ձեզի, պառոն:

— Շատ ազնիւ էք, տօքթէօս. բայց այս պարագային մէջ ինծի օգտակար դառնալու միջոցն է՝ ամենափոքր հետաքրքրութիւն մը պատճառելու առիթ չի տալ: Յամար պիտի ելլէք անշուշտ:

— Որքա՞ն առեն պիտի մնանք հոս:

— Շատ շատ երկու երեք օր: Ուշադրութիւն ըրէք ըսածիս. ձեզի չեմ արգիլեր Քաթարիմէն դուրս ելլելու. բայց անգամ մըն ալ կը կրկնեմ որ, եթէ ելլէք, զիս պիտի ձանչցնէք իբրեւ Պ. Ժազ Կրանտէ, Պրիւսէլէն. այս մտօք հրահանգներ տուած եմ արդէն նաւապետին: Հասկցա՞ք:

Եւ սկսաւ նաւաստիի երգ մը մրմնջել:

— Կատարելապէս, պառոն, կը խոստանամ ձեզ:

Պետրոս Առաքեալ իր տէրը դըրացաւ «հաւուն խօսելէն» առաջ. ես իմ խոստումս պիտի դրժեմ եղեր օրը իրիկուն չեղած:

* * *

Ժամը մէկը քսան անցած՝ կանգ կ'առնունք Պահիաի առջեւ: Ծովախորը լոյսով ողողուած էր և արդէն իսկ փոքրիկ նաւակներ ուր բնիկներ նստած էին, կը բացուէին եզերքէն դէպի մեզի գալու և վաճառելու համար տեղական արտադրութիւններ. սիկառէթ, պանան, տանձ, լեմոն, նարինջ, թռչուններ, կապիկներ, թութակներ: Պառոնուհին, նաւուն վանդակորմին կրթնած, նշաններ ու յիշատիկներ կը փոխանակէր խափշիկներու լէգէոնին հետ որոնք, մեր շուրջը, պար բռնած էին իրենց մակոյկներուն մէջ, խորայնատակ ու պայծառ ջուրին վրայ: Բայց, րոտ օրինի, դեռ ոչ ոք կրնար չոգենաւ ելլել մինչեւ որ առողջապահական պաշտօնեաները չգային: Ատոնք ալ չուշացան: Բժիշկը, երկու քարտուղարներու ընկերակցութեամբ Քաթարիմէն մտաւ, իր պաշտօնին վերաբերեալ տեղեկութիւններ առաւ ինձմէ և մինչեւ նաւապետին խցիկին մէջ արտայայտեց իր ունեցած սէրը Բարիզի վրայ, որ այնքան հեռու

էր, և իր երբեմնի ուսուցիչներուն վրայ: Ուզեց իր ստորագրութիւնը դնել այցելուներու յատուկ տոմարին մէջ և կատարելապէս սիրալիր վարմունք մը ունեցաւ:

Նոյն միջոցին, մաքսային պաշտօնեաները մեր զբօսանաւուն ներքին մասերը աչքէ կ'անցունէին: Բայց ամէնէն տպաւորիչ այցելութիւնը եղաւ նաւահանգստի վերատեսչինը որ, պաշտօնական համադրեալ հազած, երեւցաւ յանկարծ: Փոքրահասակ մարդ մըն էր, բայց պատկառելի երեւոյթով, և եկած էր ողջունելու նաւապետը Քաթարինին զոր միամտօրէն պատերազմական նաւ մը կարծեր էին:

Արարողութիւնը շատ գեղեցիկ եղաւ, փոխադարձ ողջոյններով ու ձեռքի ջերմագին սեղմումներով: Պառօնը ինքն ալ ներկայացաւ համադրեալ տաւոր պաշտօնատարին և շատ բարեկիրթ վարմունք մը ունեցաւ: Իր ազնուականի պարտականութեանցը հաւատարիմ, ուզեց իսկոյն պատուել իր հիւրերը և հրամայեց որ շամբանեա մատուակեն:

Պրազիլիացի նաւային սպային հետ շոգենաւ մտած էին նաեւ Գերմանացի մը անդեղէնի յանձնակատար և երկու Անգլիացիներ՝ ածուխի յանձնակատար: Այն կարճ միջոցին, զոր անցուցի այդ պարօններուն հետ, նշմարեցի որ տարօրինակ կերպով մը կը զիտէին Պ. տը Կռավալը: Անոնցմէ մէկը անխոհեմութիւնը ունեցաւ քանի մը խօսք փսփսալու իր ընկերոջ ակունջին և այդ վայրկեանէն՝ պառօնը վերստացաւ իր մտահոգ երեւոյթը:

Ես հեռացայ, փրփրալից գիւրիին հաճոյքներուն անտարբեր: Բայց Ալպէսդ, սեղանապետը, եկաւ իմացուց ինծի թէ նաւապետը բաժակ պարպած էր պառօնին հետ և թէ այս վերջինը ձախողաբար ձեռքէն ձգած էր զաւակը:

— Գէշ նշան է, ըսի:

Ալպէսդ, որ նախապաշարեալ մը չէր, հեռացաւ առանց ըմբռնելու իմ խօսքերուն խորհրդաւոր իմաստը:

Իրողութիւնը սա է որ, քանի մը վայր-

կեանէ ի վեր ամէն բան իմացած էի: Պ. տը Կռավալ կոչուած անձը կը փնտռուէր ֆրանսական ոստիկանութեան կողմէ (իրեւութարի Գօնթուառ տ'Էսքօնդ դրամատան հաշիւները խարդախող ու մեծագումար զրամ իւրացնող) և շատ չանցած՝ Պահիաի իշխանութիւնը պիտի ձերբակալէին զինքը, ինչպէս նաեւ իր կրինն ու սենեկապանուհին:

Նիւթըն Բօուիս նաւապետը պահ մը առաջ սա հեռագիրը ստացած էր իր նաւատիրոջմէն՝ Նիքօլսընէ. — «Դժուարութիւն մի՛ յարուցանէք և թողէ՛ք որ Պահիաի ոստիկանութիւնը ձերբակալէ ձեր երեք ուղեւորները»:

Երբ հեռագիրը նաւապետին յանձնեցին, պառօնը դէպի անոր վազելով «իմ մասիս բաժն մը կայ», հարցուց դողահար ձայնով մը: Բայց ծովու անայլալ մարդը, այդ յայտնութիւնը պարունակող թուղթը ծալելով, անտարբեր ձայնով մը պատասխանեց. — «Ո՛չ, կնոջմէս է»:

— Տօքթօ՛ւ, ըսաւ ինձ նաւապետը վայրկեան մը ետքը, գուշակած էի ձեզի արդէն թէ տարօրինակ մարդ մըն է աս:

Պատասխանեցի թէ իրաւունք ունի և դէպքերուն սպասեցի որոնք չյապաղեցան:

Պառօնուհին չէր ուզած պաշտօնական այցելուներու հանդիսաւոր ընդունելութեան մասնակցել: Ասով հանդերձ, երբ նաւահանգիստի տեսուչը մեկնեցաւ, ինքն ալ քովերօնիս եկաւ: Երբեք զինքը այնքան սիրուն չէի տեսած որքան այդ վայրկեանին, իր զբօսաշրջիկ կնոջ պարզ արդուզարդովը և փոքրիկ հովանոց մը ձեռքը բռնած զոր կը ստատանեցնէր ծաղիկի մը պէս:

Երկու յանձնակատարները բարեւեցին զինքը կնամեծար քաղաւարութեամբ մը ու հրաւիրեցին ուղեւոր ամուրը առիթէն օգտուելով իրենց նաւակով ցամաք ելլել:

— Միզի հետ չէ՞ք գար, տօքթօ՛ւ, հարցուց Պ. տը Կռավալ:

Շիտակը միտք չունէի, փափաքող չլալով ներկայ գտնուելու այն վայրկեանին ուր տեղական ոստիկանութիւնը պիտի միջ-

շամտէր: Դէմքի ծամածռում մը ունեցայ
զոր պառնոն ուղած կերպովը մեկնեց:

— Լաւ, ինչպէս որ կ'ուզէք, ժամանակ
ունիք քաղաքը շրջելու, ըսաւ. երեք օր
այստեղ կը մնանք:

Ու մակոյկը բացուեցաւ:

Ժամը հանդիսաւոր էր. վաղեցի դիտակս
առնելու զոր ուղղեցի դէպի մակոյկը: Պա-
ռոնուհին, թռչունի մը պէս զուարթ, իր
փոքրիկ թաշկինակը կը շարժէր, իսկ ամու-
սին՝ երեւոյթէն դատելով՝ երկար բարակ
բացատրութիւններ կուտար անոր, ձեռքը
կարկառած դէպի ծովեզրը:

Յանկարծ, ցամաքէն երեք հարիւր մեդ-
րի չափ հեռաւորութեամբ, նաւակ մը որ
չես գիտեր ուսկից դուրս ելաւ, Պ. տը
կռաւալը փոխադրող մակոյկին վրայ խոյա-
ցաւ, և տարօրինակ արագութեամբ մը,
նաւակէ նաւակ փոխադրութեան գործողու-
թիւն մը կատարուեցաւ որուն բոլոր ման-
րամասնութիւններուն հետեւեցայ հեռուէն:
Յաջորդաբար նշմարեցի, դիտակիս մէջէն,
պառնը որ երեք անգամ բողբոլ բուռն
շարժում մը ըրաւ, պառնուհին որ դէպի
իր նստարանը կը վերադառնար ուսկից ել-
ել կը հարկադրէին զինքը, և յանձնակա-
տարները որոնք գլխարկին կը շարժէին:

Վերջապէս, նոր մակոյկը ձերբակալեալ-
ները առաւ տարաւ դէպի քաղաք, և ես
ալ՝ իմ կարգիս՝ Ալպէռդի հետ մեր շոգե-
նաւուն մակոյկը նստայ: Բայց հազիւ հա-
րիւր մեդր տեղ կտրած էինք, երբ խորհրդ-
աւոր նաւակը վերստին երեւցաւ և պռա-
ցին մեզի. «Կեցէ՛ք, յանուն օրինաց»:

Բնականաբար զգուշացանք անհա-
ղանդ գտնուելէ և մեր անցադիրները ցոյց
տուինք.

— Տօքթէ'օ, ըսաւ ոստիկանութեան
պետը, մի՛ վախճաք. դուք չպիտի ձեր-
բակալուիք. բայց պէտք է որ մեզի հետե-
ւիք նահանգային դատաւորին առջեւ:

(Շարունակելի)

ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆՆԵՐԸ

ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

— NOVEN —

Հանրային գրատունները կամ մատենա-
դարանները շատ կարեւոր տեղ մը կը գրա-
ւեն այն բարդաւած հաստատութեանց շար-
քին մէջ, որոնք դպրոցին տուած կրթու-
թիւնը կը շարունակեն:

Մատենադարանները Անգլիոյ մէջ յիսուն
տարիէ ի վեր գոյութիւն ունին գրեթէ. ա-
մէնէն աւելի Սըր Էտուարտ Էտուարտսի նա-
խաձեռնութեան արդիւնքն են, որ երկար
ատեն ընակած ըլլալով Բարիզի մէջ, մա-
տենադարաններու գործառնութիւնները ու-
սումնասիրած էր: 1883ին, անգլիական լրա-
գիրներու եւ հանդէսներու մէջ հրատարա-
կած չարք մը յօդուածներով Սըր Էտուարտս
բաղդատութեան կը դնէր Լոնտոնի մատե-
նադարանները Բարիզի մատենադարաններուն
հետ. այն ատեն Մանչէսթըրի մէջ միակ ձրի
մատենադարան մը կար, մինչ ցամաքային
Եւրոպա ունէր 250է աւելի նոյն կարգի հաս-
տատութիւններ, ամէնուն մատչելի, աղ-
քատներուն թէ հարուստներուն, օտարաղ-
գիրներուն թէ քաղաքացիներուն: Սըր Էտ-
ուարտս նաեւ ի վեր կը հանէր սա պարա-
գան թէ այդ մասին Մ. Նահանգները կը
գերազանցէին մայր-երկիրը: Այդ յօդուած-
ները, բուն վիճարանութիւններու առար-
կայ ըլլալէ յետոյ, սա արդիւնքը ունեցան
որ քննիչ յանձնաժողով մը կազմուեցաւ:
Այս վերջինը օրինագիծ մը ներկայացուց,
առաջարկելով որ մատենադարաններ ու
թանգարաններ հաստատուին ճարտարագոր-
ծական քաղաքներու մէջ: Օրինագիծը ջեր-
մապէս պաշտպանուեցաւ իր հեղինակին՝
Ուիլիէմ Իուարթի, ինչպէս նաեւ Պրօթըր-
թընի կողմէ և ի վերջոյ ընդունուեցաւ,
հակառակ համալսարաններու և գիտուննե-
րու ընդդիմութեան, որոնք յետոյ այնքան
լայնօրէն պիտի նպաստաւորուէին, ամէնէն
թուեղ ջատագովը դառնալով անոնց:

«Տարեկան 50 միլիոն կը ծախսենք, կ'ը-

սէր Պրոթըրթոն, ոճիրները զսպելու համար. եթէ թոյլատրենք համայնքները որ իրենց ունեցած մէկ ոսկիին մէկ սուն (քսան փարա) յատկացնեն մատենադարաններու, ո՛չ միայն նոր օրէնքը ընկերական բարիք մը պիտի ըլլայ, քանի որ մոլութեան դէմ պիտի կռուի, այլեւ լուրջ խնայողութիւն մըն ալ պիտի կազմէ:»

Ուստի 5000 բնակիչ ունեցող համայնքներուն արտօնութիւն տրուեցաւ մասնաւոր տուրք մը գանձելու մատենադարաններու համար, և 1853 սեպտեմբեր 2ին, առաջին մատենադարանը, արդիւնք նոր օրէնքին, մեծ հանդիսաւորութեամբ և խանդավառութեամբ բացուեցաւ Մանչեսթըրի մէջ: Տիքընս, Թէքըրէյ և Պըլտէր Լիթթըն պերճախօս ճառեր արտասանեցին այս առթիւ: Դաստիարակութիւնը, կ'ըսէ Պըլտէր Լիթթըն, բառին լայն առումով, բովանդակ կեանքի գործ մըն է, ու մատենադարանները պատանկութեան դպրոցներն են: Խոր աղիւսութիւն մը գործեց իմ վրաս, երբ ի՛նչ Բարքի մատենադարանին մէջ տեսայ այնքան երիտասարդներու բանիմաց դէմքեր, գիրքերու վրայ հակած ամենայն ուշադրութեամբ ու լրջութեամբ: Ձգացի թէ ի՛նչ սուղ զործունէութիւն ցոյց կուտային ամէն ատունք, որոնք գարեջուրի և օղիի պէս գրգռիչներու անձնատուր կ'ըլլային առաջ:

«Տարւոյն վերջը, այդ մատենադարանը կը պարունակէր 23,000 հատոր գիրք և 138,000 փոխառութիւններ ըրած էր: Անկէ ի վեր Մանչեսթըր այն քաղաքը եղած է Անգլիոյ մէջ, ուր մատենադարանները ամէնէն աւելի աճած են:

«Ամէն քաղաք չնտեւեցաւ Մանչեսթըրի տուած օրինակին: Էտիմպուրկ երկու անգամ մերժեց մատենադարանի տուրքը: 1886ին ի վեր, երբ Էնտրիու Բարնէկի իր երկրին մայրաքաղաքը՝ Էտիմպուրկ՝ օժտեց ճոխ մատենադարանով մը, Սկոտլանտ 3 միլիոն ծախսեց իր մատենադարաններուն համար: Լոնտոն այդ շարժումին մասնակցեցաւ 1883ին միայն, և իր 82 թեմերէն 52ը ըն-

դունած են մատենադարանի տուրքը:

«Մատենադարաններու կազմակերպութիւնը շատ հետաքրքրաշարժ է: Ամբողջ օրը բաց են և մասնաւոր սրահներ ունին: Աւելորդ է ըսել որ ձրի են ու յաճախ քաղաքացետարանին կամ ունէ չքեղ շէնքի մէջ հաստատուած:

«Ամէնչէն հետաքրքրաշարժ սենեակն է լրագիրներու սենեակը: Երեւակայեցէք երկար ու նեղ սենեակ մը ուր զրուած են մարդու հասակով ծուռ սեղաններ, որոնց վրայ արմուկները դնել կարելի է: Այդ սեղաններէն իւրաքանչիւրին վրայ լրագիր մը փակցուած է, բայց այնպէս որ անկարելի է զայն առնել տանիլը: Կէս օրին, և մանաւանդ իրիկուան, այդ սրահը կը լեցուի ընթերցողներով. յաճախ քանի մը հոգի կը համախմբուին միեւնոյն լրագրին շուրջը, զոր աչքէ կ'անցընեն միասին, ո՛չ միայն ծանուցումները, այլեւ խմբագրականները:

«Լրագիրներու սրահին քով կայ հանդէսներու սրահը: Երկար սեղաններու վրայ զրուած են ամէն կարգի լրագիրներ ու հանդէսներ, տեղական թէ օտար, մասնաւորական և արուեստագիտական, զորս գործաւոր ու ճէնթլմէն աչքէ կ'անցընեն, կը կարդան կամ կ'ուսումնասիրեն: Փոխառութեան սրահը կը գտնուի ընթերցման սրահին քովիկը: Հոն է որ գործաւորները, իրենց աշխատութենէ դարձին, կուգան փոխ կ'առնեն գիրքեր՝ տան մէջ կարդալու համար իրիկուան հանգիստի ատենին: Դիտելի է որ, զրադարանագետները, շատ կարող մարդիկ, ընթերցողներու առաջնորդ կ'ըլլան գիրքերու ընտրութեան մէջ. ընդհանրապէս ընտիր մատենագիրները ամէնէն աւելի կը փնտռուին ու կը կարդացուին:

Բայց սխալ պիտի ըլլար կարծելը թէ Անգլիոյ բոլոր մատենադարանները մեր ներկայադարձին պէս են: Յայտնի է թէ այդ երկրին մէջ ո՛րքան ծայրայեղութեան մըդուած է անհատականութեան զարգացումը: Մատենադարանները այնպէս մը կը մատակարարուին որ մեծագոյն արդիւնքը ընծայեն և տեղական մասնաւոր պահանջումներուն գոյ-

հացում տան, նոյն իսկ ընկերային իւրաքանչիւր դասակարգի պէտքերը նկատի առնելով:

«Անգլիա այսօր 700 մատենադարան ունի 350 քաղաքներու մէջ. ընդամենը 5 միլիոն գիրք կը պարունակեն և տարին 35 միլիոն գրքի փոխատուութիւն կ'ըլլայ: Մատենադարաններու տուրքը, տարին 20 միլիոն ֆրանք կ'արտադրէ: Կալէսի երկրին մէջ 95,000 բնակչի մէկ մատենադարան կ'իյնայ, Անգլիոյ՝ 100 հազար, Սկոտլոյ՝ 225,000 և Իռլանտայի՝ 275,000: Անգլիական գաղթավայրերը այս մասին կը յիշեն մայր երկրին հետ: Աւստրալիան Դաշնակցութիւնը 850 մատենադարան ունի և իւրեք միլիոնէ աւելի գիրք, Քանադա՝ իւրեք միլիոն, Հարաւային Աֆրիկէ՝ 150 մատենադարան և 400,000 հատոր, Նոր-Չէլանտա՝ 300 մատենադարան և 400,000 հատոր:

«Հիմա քննենք թէ մատենադարանները ընկերական ինչ կարեւոր դեր խաղացած են յիսուն տարիէ ի վեր: Անգլիացիները մեծ մասամբ մատենադարաններու բազմացման կը վերագրեն ոճիրներու և յանցանքներու զգալի նուազումը: 1890 հոկտեմբեր 1ին նոր մատենադարանի մը բացման առթիւ, Սըր Ճօն Լըպպօս սա կարծիքը կը յայտնէր. «Ամէն ոք կը նշմարէ թէ մեր դպրոցները սուղի կը նստին և ծախքերը հետզհետէ կ'աւելնան: Բայց ինծի այնպէս կը թուի որ ապիտութիւնը աւելի սուղի կը նստի քան կրթութիւնը: Այսպէս, մարդկութիւնը և լաւ ըմբռնուած չա՛ր իրարու հետ համբարալս են: Արդարեւ, չքաւորութիւնը, ամէն տարի, միջին հաշուով, 1870ի միջոցները 200 միլիոնի նստած է Անգլիոյ. յանցաւորներուն և ոճրագործներուն համար ալ այդ գումարին կէսը ծախսուած է: Եթէ երբեք չքաւորութիւնը, յանցանքները և ոճիրները աւելցած ըլլային միեւնոյն համեմատութեամբ, այսօր հարկ պիտի դառնար 400 միլիոնի գումար մը ծախսել չքաւորներուն համար, 200 միլիոն ալ յանցաւորներուն համար: Սակայն ասոր կէսն իսկ կը բաւէ, որովհետեւ թշուառութիւնները ու ոճիրները նուազած են:

«Մինչ 1877ին 20,000 դասապարտեալ կային Անգլիոյ մէջ, 1890ին այդ թիւը իջաւ 15,000ի, հակառակ բնակչութեան յաւելման: Ամէնէն աւելի երիտասարդ յանցաւորները նուազած են: Միեւնոյն ատեն չքաւորներուն թիւը հարիւրին հոսկէսէն 2ի կ'իջնէր: Այդ արդիւնքները ցոյց կուտան թէ իրապէս գոյութեան իրաւունք ունին դպրոցներու եւ ժողովրդական կրթութեան համար եղած ծախքերը, որովհետեւ անժխտելի է թէ ագիտութիւնն ու անապաշտութիւնը պատճառ կ'ըլլան ոճիրի, մինչ կրթութիւնը կը պայքարի անոր դէմ: Ահա ինչո՞ւ համար ճշմարտապէս զարգացած ամէն մարդ պարտի իր չուրջը կրթութիւն տարածել: Ժողովուրդը, աստիճանաբար վարժուելով աւելի բարձր ու ազնիւ վայելքներու, մտքի հաճոյքները պիտի նախընտրէ մարմնական գոռահիկ գոհացումներէն: Այսպէս, լաւագոյն վիճակ մը պիտի ստանայ»:

Մատենադարանները ո՛չ միայն տարածուած են քաղաքներու, այլ եւ գիւղերու մէջ, ուր անհատական նախաձեռնութիւնը մեծ գործ կը տեսնէ: Գիւղային մատենադարանները արագօրէն կը զարգանան, և կարելի է ըսել թէ մատենադարաններու մասին ո՛չ ոք անտարբեր է Անգլիոյ մէջ: Ժողովուրդի ամէն դասակարգեր կը շահագրգռուին մատենադարաններով: Դպրոցական դրութիւնը լրացնող հաստատութիւններէն մէկն է ան:

Ստացանք՝ Գառնգիւղի քարոզիչ Տ. Ղեւոնդ վարդ. Դուրեանի նոր հրատարակած գրքոյկը, Չօսա Աւետարաններու ծագումն ու վաւերացումը քիւրքի, ուր Դեր, հեղինակը կը հաստատէ թէ Չօսա Աւետարաններն ականջալուր ու ականատես անձանց ձեռամբ պատրաստուած գրքեր են և հիմն ու կոռուանը կը կազմեն քրիստոնէական աստուածային կրօնին: — Մատթէոսեան սիրուն տպագրութեամբ հատորիկ մը է, գին 100 փարա:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
ՏԻՐ ԵՆ ՏԵՐԿԵ—ՏՈՒՔԻ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ Մ Ի Տ

Կրտսեանց

Հողերի եւ ծովային ապահովագրութիւններ՝ շահուէտ պայմաններով:
Այլեւ տեսակ գոյնիւնի գործեր, ներածում արտածում եւ մաքսային գործողութիւններ:
Եւրոպական աւելանալից գոյնիւնի գործեր, միջոցաւ՝ գումար եւ պարզ պատկերացում:
Գործը քառասունութ տարեկան պարտաւորութիւն. Ֆորօկրաֆի կապիտալ:

Կր հայրա՛թե

«Թ. մաս Սքոթլանդ Անգլ. Տան դրամադիզներէն:

Սքոթլանդ, աւելանալից բիւրօներ, շարժական վճարումներով:

Այնպէս զերթիւն դրութեամբ պիտի լինեն:

Այլեւ տեսակ երկրագործական եւ թիթեղագործի մեքենաներ:

Ուղղութեամբ շահուէտներ եւ տեսակ վճարներ եւ կապիտալ թելեր:

Գումարային լոնտոնականութիւններ փութով կը կապուին:


5-10

Հասցէ՝

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ ԻԿԼՈՒՄ

PHOENIX ASSURANCE Ltd. Co.

“Փ Ի Ն Ի Ք Ս”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆԾՈՆ 1782 ԻՆ

ՆԱ ՊՈՐՄԷ Ի ՊՈՒԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ՄՊՈՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագրուիս եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս առկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ շնորհալի մէջ իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ կոյտակի դէմ մէկ տեսակ անարժեք եւ չարժեքն ունեցող ք. յայտ նպատակով պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ

ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ցաւոք վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. ոսկի:

Ընդհ. գործակալ Պալսոյ եւ գումարաւոր:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Պանֆ Օրօմանի մօտ
Ղալաթիա:

Փոխ գործակալ ի Պալսոյ

ՃԻՎԱՆ ԹԷԲԷԵԱՆ

7-10

Ֆինսկեան խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՈՒՐԱ, ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիւէին դէմ

Գե. Նե. Շր. օրերը առաւօտեան կանոն

խան մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 քն մինչեւ 11 1/2

Կերակի օրերը ժամադրութեամբ 7-10



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ. ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ

1881 ഫെബ്രുവരി 20^{ാം} തീയതി . വില്യം ജെയിംസ് കോളേജ് സ്കൂൾ

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ, 15-րդ,

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւն էր կ'ընդունէր:

ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ՝ ՏԵՍԱԿ՝ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ՝

Ինչպես նաև ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կաթաւելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 *ფრანკ*

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000

Ընկերութեան ապահովագրութեան երրուն պնդարտած դրամա-

գլխիս եւ փնտսուց հաստուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագիւն եւ տուկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պո


7-10

7-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ԿԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հերժայի վաճառատունք՝ գտնորեղէններու, սոյի եւ արծաթ չգծանաւ. գտնոյն. պատի եւ քոճայի ժամագոյններու մասնաւոր վաճառութեան գտաւ, իր բոլոր ժամերը յոճա խորդէրներու վաճառութեանն քաղաքներում՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ու մէն եղանակի յառաի վերջին հասնէ ու թողնէ վառ պատանիք աւելի արանց, հասնէ եւ աղայոց համար ալ մէն տեսակ հագուստներու աւելցնելի ետեւ. մաշակաւ վերապետներ, նաեւ ձերթայեղէններ, ֆոթոգրաֆներ եւ քառօններու աւելցնելի հօշիւներ. Ունն հասել հակաբարի, ձեղանի լամպաներ, մանկայիններ, եւրոպական ու արաբական գորգեր, գետնի մաշականեր, կրօնօրհներ, ու պետքը թանկեր՝ տեսնալեղին հաստիւնութիւններով:

Հերձայի վճռաւորներ իրականացէին ու լուծօրէն շնորհ է հանձնաթերքի վճարողները եւ քաղաքացիները իր ապրանքներուն աշխատանքին եւ արհիւնդար մարդութեան, ճեւղաւորներուն եւ արհաւիրքներուն համար:

Այն ամենն որպէս, որ ժէրիս վաճառման է

1. 2. 3. 4. 5. 6.

*Միւլէ ԲԷ զնուած աշանքին հարկերին 20ը կտեսնէ. եւ մնացել գումարին Հա
մար չ-բաթ-կան հարկերին 5 վճարմամբ պատրաստ է հալթալթել:*

[Faint handwritten text]

ՄԵԾ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐԶ'ՆՑ ՄԵԾ ՓՈԴՈՑ ԹԻԻ 13

Անք-ի մը այդեկէ բաւական է համարուելու համար թէ՛ Հերման, այնպիսի կռ-
մաներովն որոնք մը ի վերահսկէ աստու քահանայի, իս մէջէն յիշուեալն ահա, լաւ խորհրդեր:

Կանխիկ գնողներու նամար հարիւրին 5 գեղ:

Սակարկուծիւն չկայ :

Շուրջ թիւն պէտք մտնի համար հաւանքիցնէր միշտ պատրաստ են :

7-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՈՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԼՈՒՆԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒԾՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքով:

Կատարեալ երաւիտանքով:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը: 7—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ հետ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ վեր կը դարմանէ սառնաքոխ, աղիաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային ախտութիւնները, հին եւ նոր գաղտնիքներ: Այս վերջին տեսակները առանց սառնաքոխ խոնգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր հէտ օրէ վերջը: Զարեքարթի օրերը միայն ձրի: 6—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արտնոց եւ կանանց ճշգրիտաբար հագուանքներու, Պօլիս, Սուլթան—Համամ, Մի. Թիւի Դրամատան դէմ Թիւ 58:

Սոյն վաճառատան մէջ գտնուած աղբիւրները, արտնոց ու կանանց յատուկ հագուանքներ, իրենց գեղեցիկութեան կը միացնեն առկուլութիւն, եւ դիւրամտակի գիւղերու առուկութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոյ թողունքն է իր բազմաթիւ յաճութիւնները: 7—10